ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2021թ. N 467-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու կանոնակարգի 50-րդ և 55-րդ կետերը, ինչպես նաև Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի NN 89-Ա, 90-Ա, 91–Ա, 92-Ա, 93-Ա և 94-Ա որոշումները, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացված՝ ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության թիվ 2 որոշումը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու ֆինանսավարկային և համայնքի սոցիալ-տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի հետևյալ կազմը՝

հանձնաժողովի նախագահ՝ Ժիրայր Բաբայան

հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Լուսիկ Սարգսյան

հանձնաժողովի անդամներ՝ Արմենուհի Սաֆարյան

Արկադի Մնացականյան

Մարինե Մկրտչյան

2. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի հետևյալ կազմը՝

հանձնաժողովի նախագահ՝ Լուսիկ Սարգսյան

հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Արմենուհի Սաֆարյան

հանձնաժողովի անդամներ՝ Մխիթար Համբարձումյան

Մանան Գևորգյան

Մարինե Մկրտչյան

3. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի հետևյալ կազմը՝

հանձնաժողովի նախագահ՝ Արտակ Բագրատյան

հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Սևակ Մկրտչյան

հանձնաժողովի անդամներ՝ Արտուշ Սիմոնյան

Վարուժան Վահանյան

Մխիթար Համբարձումյան

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 դեկտեմբերի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հունվարի 2022թ. N 1-Ա

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները սահմանելու մասին» N 2-Ն հրամանով հաստատված կարգով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի հիմքով Ջերմուկ համայնքի վերակազմակերպմամբ պայմանավորված Ջերմուկ համայնքի կազմում եղած և Վայք համայնքին միավորված Հերհեր և Կարմրաշեն գյուղերի բոլոր՝ ներառյալ արտահաշվեկշռում հաշվառման ենթակա և առկա, սակայն չհաշվառված (անկախ պատճառներից), ակտիվների և պարտավորությունների հանձնման-ընդունման նպատակով ստեղծել գույքագրման կենտրոնական հանձնաժողով հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝ Վահագն Արսենյան- Ջերմուկ համայնքի ղեկավար

հանձնաժողովի քարտուղար՝ Արման Հայրապետյան- ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ-աուդիտոր

հանձնաժողովի անդամներ՝ Արմինե Ղազարյան- ֆինանսական բաժնի պետ

Նաիրի Բաբայան – Հերհեր գյուղի վարչական ղեկավար

Ռոման Առաքելյան- Կարմրաշեն գյուղի վարչական ղեկավար

Վարդան Սարգսյան- համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ

Հայկ Ավագյան – Վայք համայնքի ղեկավարի տեղակալ (համաձայնությամբ)

2. Սույն կարգադրության 1-ին կետում նշված աշխատանքները տեղերում փաստացի իրականացնելու համար ստեղծել գույքագրման աշխատանքային հանձնաժողովներ հետևյալ կազմով՝

2.1. աշխատանքային առաջին հանձնաժողով՝

հանձնաժողովի նախագահ՝ Նաիրի Բաբայան- Հերհեր գյուղի վարչական ղեկավար

անդամներ – Արամ Սարգսյան՝ համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ

Նատալիա Հովհաննիսյան- Վայքի համայնքապետարանի ֆինանսական բաժնի պետ (համաձայնությամբ)

2.2. աշխատանքային երկրորդ հանձնաժողով՝

հանձնաժողովի նախագահ՝ Ռոման Առաքելյան- Կարմրաշեն գյուղի վարչական ղեկավար

անդամներ – Արմենակ Առուստամյան ՝ համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ

Նարինե Մարկոսյան - Վայք համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահ (համաձայնությամբ)

3. Գույքագրման կենտրոնական հանձնաժողովին՝ սույն կարգադրության 1-ին կետում նշված աշխատանքները կատարել երկամսյա ժամկետում և արդյունքները ներկայացնել Ջերմուկ համայնքի ավագանու հաստատմանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 հունվարի 3
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հունվարի 2022թ. N 2-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 1/33 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Արկադյա Գավրուշի Աբրահամյանի դիմումները (մտից N 196՝ 27.01.2021 թ. և N 7՝ 04.01.2022 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 28122021-10-0019 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 15-րդ փողոցի N 1/33 հասցեում գտնվող 40,13 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը (արտաքին մակերեսը՝ 44,38 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 44,38 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Արկադյա Գավրուշի Աբրահամյանին (հաշվառումը՝ ԼՂՀ, Բերձոր, 7-բդ թաղամաս, տուն 12:
2. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
   2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.
   3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով՝
   1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11),

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:

4. Արկադյա Գավրուշի Աբրահամյանը պարտավոր է վճարել՝

1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝48850 (քառասունութ հազար ութ հարյուր հիսուն) դրամ՝ ավտոտնակի գինը,

2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝36000 (երեսունվեց հազար) դրամ՝ հողամասի գինը:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Արկադյա Գավրուշի Աբրահամյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արկադյա Գավրուշի Աբրահամյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 հունվարի 7
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հունվարի 2022թ. N 3-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ N 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Վասիլ Արամի Կունջուրյանի դիմումները (մտից N 89՝ 25.01.2021 թ. և N 6՝ 04.01.2022 թ.) **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 28122021-10-0018 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 4-րդ փողոցի 1-ին նրբանցքի N 6 հասցեում գտնվող 42 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը (արտաքին մակերեսը՝ 47,81 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 47,81 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Վասիլ Արամի Կունջուրյանին:
2. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
   2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,
   3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով՝
   1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11),
   2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:

4. Վասիլ Արամի Կունջուրյանը պարտավոր է վճարել՝
   1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝52600 (հիսուներկու հազար վեց հարյուր) դրամ՝ ավտոտնակի գինը.
   2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝38750 (երեսունութ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ՝ հողամասի գինը.
5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վասիլ Արամի Կունջուրյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վասիլ Արամի Կունջուրյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 հունվարի 7
Ջերմուկ